ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 100 - Ա **15 հունիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՋՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 և 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն որոշումների պահանջների.

Որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2016թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով, 2017 թվականին ՀՀ պետական բյուջե տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները (հավելված 1):

2) ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2016 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ նախահաշիվները:

2. Հանձնարարել՝

1) Հավելված 1 տեղեկանքում ընդգրկված ընկերությունների տնօրեններին՝ շահութաբաժնների գումարները սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև ս.թ. հոկտեմբերի 1-ը փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին:

2) Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Յու Մուշեղյանին ընկերությունների 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2017 թվականին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշիվների վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպտի տեղակալ Ա. Նիկոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների 2016թ. գործունեության արդյունքներով ՀՀ 2017թ. պետական բյուջե տարեկան շահութաբաժին վճարելու առաջարկությունների մասին (համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

Հ/Հ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի կազմակերպության անվանումը	ՀՀ 2017թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,852,800.00
2	«Գավառի պոլիկլինիկա» ՓԲԸ	781,500.00
3	«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ	427,500.00
4	«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,741,850.00
5	«Մարտունու ծննդատուն» ՓԲԸ	1,408,400.00
6	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	961,450.00
7	«Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ	341,950.00
8	«Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ	43,000.00
9	«Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	27,000.00